

ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԱԽԱՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՆՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Հայաստանի նախապատմութիւնն սկսում է մեր թուարկութիւնից առաջ 14րդ դարից, երբ հայկական բարձրաւանդակի վրայ երեւան են դալիս Նախիրի-Ուրարտական ցեղերը եւ անդուլ պատերազմների մէջ են մտնում Ասորեստանի մեծ տէրութեան դէմ:

Հայաստանի այդ նախապատմական ժողովուրդների մասին մեզ տեղեկութիւններ են հաղորդում ասորեստանեան արձանագրութիւնները, որոնց մէջ նախապատմական Հայաստանը կոչւում է Նախիրի, Նախրի, Նա'րի կամ Նիրի, եւ ապա՝ Ուրարտու: Այս վերջինիս մասին հետազոտում հարուստ տեղեկութիւններ են տալիս մեզ նաեւ Վանեան (Տոսպեան կամ Տոչպեան) արձանագրութիւնները:

Նախիրի-Ուրարտական ցեղերի պատմութեանն անցնելուց առաջ, յատկապէս Ուրարտականի, որով սկսում է Հայաստանի նախապատմութեան քաղաքակրթութիւնը՝ որպէս պետական ու քաղաքական իշխանութեան սկզբնաւորման առաջին ժամանակաշրջան, հարկաւոր է իմանալ, ղէթ խիստ համառօտակի, թէ՛

1. Նախիրի-Ուրարտական ցեղերից առաջ ի՞նչ ցեղեր ու ազգութիւններ զոյութիւն ունեցել հայկական բարձրաւանդակում:
2. Ծագումնաբանական ու ցեղագրական տեսակէտից ինչպիսի՞ առնչութիւնների մէջ են դտնուել նրանք նախորդ ցեղերի ու ազգութիւնների հետ:

Նախապատմական Հայաստանի հնագոյն դարերի պատմութիւնը կարելի է իրաւամբ համարել արձանագրակամ ժամանակաշրջանի պատմութիւն: Որովհետեւ Հայաստանի հնագոյն դարերի մասին մենք տեղեկութիւններ ենք քաղում մեծ մասամբ բեւեռագիր կամ սեպագիր արձանագրութիւններից, որոնք իբրեւ յիշատակներ մեզ աւանդուել են ժամանակաշրջանի բարձր քաղաքակրթութիւն ստեղծած մեծ տէրութիւնների ու ազգութիւնների կողմից: Այս տեսակէտից ուշագրաւ են Քաղդէացիների (Բաբելոնացիք), Նիպտոս-ցիների, Ասորեստանցիների, Հիթիթների տների, Խարրի-Միտանիների, Ուրարտացիների (Վանեան), Մարերի, Պարսիկների արձանագրութիւնները, որոնք բարաթայտերի, աղւսների, պնակիտների (tablette) վրայ քանդակած կամ գրոշմագրած արձանագրութիւններով մեզ պատմում են իրենց պատերազմների, աշխարհակալութիւնների, նուաճումների, ղերելարութիւնների եւ կողոպուտների մասին, միաժամանակ նկարագրում իրենց քաղաքակրթութեան, մշակոյթի եւ ներքին կեանքի իրաւական ու բարոյական յարաբերութիւններն ու կարգերը: Յաճախ նրանք տեղեկութիւններ են հաղորդում ամ-

բողջովին անծանօթ ժողովուրդների մասին, որոնք ազգամիջեան յարաբերութիւնների ընթացքում ապրել ու անհետացել են առանց արձանագրական յիշատակութիւններ թողնելու եւ որոնց մասին մենք ոչինչ կարող էինք իմանալ այսօր, եթէ չլինէին արձանագրական վկայութիւնները:

Այս իմաստով, կարծում ենք, պատմագիտութեան ճակատագիրը տարբեր կը լինէր այսօր, եթէ հնագոյն ժողովուրդների բոլոր արձանագրութիւնները կամ արձանագրական դիւանները անվնաս ու անվթար պահպանուելով հասած լինէին մեզ: Դժբախտաբար, դրանց մի մասը անհետ կորել ու ոչնչացուել է դարերի ընթացքում աշխարհաւեր պատերազմների թոհուրս: ճարակ դառնալով հրդեհներին ու վայրագ աւերածութիւններին. մի մասը, ի հարկէ, փրկուել է կորստից պատահաբար մնալով կործանուած քաղաքների ու ուտանների աւերակների շեղակոյտերի տակ, որոնց վրայ դարերի հողմերն ու փոշիները եկել ու ծածկել են, երկար ժամանակ դրանք պահելով անյայտութեան մէջ, մինչեւ որ վերջապէս եկել է այն բախտաւոր պահը, երբ պեղումների ու որոնումների շնորհիւ դուրս են հանուել իրենց քաղաքաբան թաքստոցներից:

Յայտնի է, որ մեր թուարկութեան վերջին 18րդ եւ 19րդ դարերում մարդկութեան դիտական միտքը վերադարձումի մի փայլուն շրջան ապրեց: Ի մասնաւորի պատմագրութիւնը, որի եռանդուն զործունէութեան եւ միաժամանակ պետութիւնների աջակցութեան ու դրամական մեծամեծ օժանդակութիւնների շնորհիւ, կատարուեցին պատմական պեղումներ, որոնք լոյս աշխարհ հանեցին նախնազոյն դարերի ժողովուրդների պատմութեան վերաբերւող արձանագիր յիշատակարաններ, որ պարփակում էին հնագրեան զաղտնիքներ: Մարդկութեան հանճարեղ մտքի շնորհիւ լուծուեցին այդ զաղտնիքները ու վերծանուեցին արձանագրութիւնների խորհրդապօղ լեզուները:

Արձանագրութիւնների վերծանման զժուարին զործը գլուխ բերեցին ընդհանրապէս Եւրոպայի դիտնականները, որին մասնակցութիւն ունեցան նաեւ Հայեր, յատկապէս Վանեան արձանագրութիւնների վերծանման զործում:

Այսպիսով, Հին Ալիսարհի մեծագոյն երկրների պատմութեան լուսաւորմամբ՝ լուսաւորուեց տակաւ հայկական բարձրաւանդակի պատմութիւնը, որի բնակիչները շատ հին ժամանակներից յարաբերութեան մէջ մտնելով Միջագետքի, Ասորեստանի, Եգիպտոսի եւ Փոքր Ասիայի երկրների բնակչութեան հետ՝ հաստատուեցին քաղաքական, մշակութային ու ցեղակցական փոխադարձ կապեր:

Այսպիսով, հիմնուելով արձանագրական վկայութիւնների վրայ եւ համեմատելով վկայագրական տուեալները՝ պատմաբան դիտնականներին յաջողուել է որոշակի ճշդել հնագոյն Հայաստանի սահմանները, երկրամասերը, բնակչութեան կազմիչ տարրերը (ցեղերը), ժամանակագրական յաջորդականութիւնը եւ ներքին կեանքի իրական վիճակը:

Այսպիսով, 19րդ դարի հնագիտական պեղումները եւ Ասորեստանեան սեպագիր արձանագրութիւնների վերծանումը, որին յաջորդեց նաեւ Հայաստանի Ուրարտական (Վանեան) յուշարձանների ընթերցումը, եթէ երեւան հանեցին նայիրի-Ուրարտական ժողովուրդների պատմութիւնը, ապա՝ աւելի յետոյ, այլ յիշատակարանների ուսումնասիրութիւնը (Տել-Ամառնայի եւ Բոդաքէօյի արձանագրութիւնները) պատմութեան յայտնաբերեցին այլ ժողո-

վուրդներին, որոնք ծանօթ դարձան Խարրի-Միտանիններ, Հիթիթնեսիտներ կամ Կանեշներ եւ այլ անուններով¹ :

Նախապատմական Հայաստանի հնագոյն ցեղերի մասին արդէն դիտական ուժ է ստացել այն տեսակէտը, թէ Նայիրի-Ուրարտական ցեղերից առաջ Հայկական բարձրաւանդակում ապրել են Սուբարիններ, Հուրրիններ (Հարրիններ կամ Խարրիններ), Խարրի-Միտանիններ, որոնք ունեցել են իրենց թագաւորութիւնը եւ Հայաստանը, դէթ Հայաստանի մի ստուար մասը, հարաւ-արեւմուտքից՝ ենթարկել են իրենց եւ դարձրել իրենց բնակութեան վայրը² :

Այդ ժողովուրդների շփումն ու յարաբերութիւնը այնքան մօտ են եղել նախահայաստանի այլացեղ բնակչութեան հետ, որ յաճախ պատմագէտների կողմից շփոթոււմ են իրրեւ բնիկ տարրեր ու համարոււմ երկրի բնակիչներ ու նրանցով բնակեցուած վայրերն էլ իրենց բնական հայրենիքը :

Բայց թէ վերոյիշեալ ցեղերը չէին կարող Հայկական բարձրաւանդակի բուն բնակիչները լինել, որքան էլ որոշ ընդհանրութիւններով կապուած լինէին միմեանց, այլ միայն վերաբնակիչներ ու հիմնական ազգաբնակչութեան մէջ առանձին ցեղատեսակներ, առանձին ժողովրդախաւ ու դադութիւն, եւ թէ վերջապէս՝ Հայաստանի հիմնական բնակչութիւնը եւ նրա մէջ գերիշխող տարրը հանդիսանում էին էթնիկական այլ ծագմամբ ցեղեր, ահա սոյն աշխատութիւնը հեղինակի համեստ ուժերի սահմաններում, փորձում է պատասխանել դրանց :

Արդ, ի՞նչ էր ներկայացնում իրենից Հայկական բարձրաւանդակը, եւ ի՞նչ ցեղերից ու ազգութիւններից էր բնակեցուած նախքան Նայիրի կամ Նայիրի-Ուրարտական ցեղերի պատմութեան ասպարէզ դալը (որոնց մասին առաջին արձանագրական տեղեկութիւնները սկսում են երեւալ 14րդ դարում մ. թ. ա.) , —այն հնագոյն ժամանակներում, երբ Միջագետքում Սարգոն-Ակկադիի եւ ապա՝ նրա թոռնորդու՝ Նարամ-Սինի բանակներն արշաւում էին դէպի Արեւմուտք, երբ եղիպտոսում իշխում էր Նոմարքոսների Միջին թագաւորութիւնը, երբ Փոքր Ասիայում՝ Ալիս գետի հովիտներում եւ կամ Կապադովկիայում եւ նրանից դէպի հարաւ-արեւմուտք բնկած մասերում՝ մինչեւ Միջերկրական ծովը, տարածուել էին «Ուաթթա», «Ուաթ» եւ կամ «Ուեթա», «Ուեթ» կոչուած ժողովուրդները եւ մրցակցում էին միմեանց հետ՝ իրենց մէջ ունենալով նաեւ Ասորիքն ու Փրինիկէն : Արդարեւ, այն ժամանակաշրջանի Հայկական լեռնաշխարհի պատմութիւնը կատարելապէս խաւարի մէջ է : Բայց ինչ որ այս ուղղութեամբ հնարաւոր է յարաբերական ճշդութեամբ ենթադրել, այն է, թէ այս հեռաւոր ժամանակաշրջանում Հայաստանի բնակիչները պէտք է լինէին առաւելապէս այն ժողովուրդները եւ կամ այն ժողովուրդների ցեղակիցները, որոնք աշխարհագրական մերձակորդոյն սահմանների վրայ որպէս տիրապետող դիրքերի հասած ու հզօր պետականութիւն ստեղծած հարեւան ժողովուրդներ ապրում ու գերիշխում էին, եւ որոնք բնականաբար իրենց անմի-

¹ Տես Պրոֆ. Ա. Խաչատրեան, «Հայաստանի Սեպ. Շրջ. Պատմութիւն», Երեւան, 1933, էջ 72 :

² Պատմագրական այս հարցերին մուխուած մի շարք Հայ եւ օտար հեղինակութիւնների մէջ առաւել յիշատակելի գործ է Պրոֆ. Աստ. Խաչատրեանի «Հայաստանի Սեպ. Շրջ. Պատմութիւն» աշխատութիւնը, որին յաճախակի անդրադառնալու առիթներ ենք ունենալու սոյն աշխատութեան ընթացքում :

ջական ազդեցութեան տակ առած պէտք է լինէին սահմանամերձ երկրներէ բընակիչներին եւ նրանց մէջ հանդիսանային դերիշխող տարրեր :

Այս ժամանակաշրջանում, յայտնի է արդէն, որ նախա-Հայաստանը իր արեւմտեան սահմաններով անմիջապէս միանում էր «Յաթթա» կամ «Յաթ» (ըստ Ասորեստանեան արձանագրութիւնների) եւ «Յեթա» կամ «Յեթ» (ըստ Եգիպտական արձանագրութիւնների) կոչուած ժողովուրդներին, որոնք Ս. Գրքում նաեւ անուանուել են «Հեթ», «Յեթ», «Հեթեմ» (Մենդոց Գիրք, գլ. Ժ.) ու հայերէն թարգմանութեան մէջ ստացել են «Հեթ» կամ «Բեթացիք» անունները : Իսկ հարաւ-արեւմտեան սահմաններով մօտենում էր Միջագետքին՝ Սումմեր-Ակկադեան աշխարհին :

Այսպիսով, Հայկական բարձրաւանդակի նախապատմութիւնը բնական կերպով առնչուած է մի կողմից Փոքր Ասիայի խեթական աշխարհի, միւս կողմից՝ Միջագետքի հետ : Որովհետեւ, ինչպէս տեսնելու ենք շուտով, այս հնագոյն ժամանակներում Հայաստանի պատմութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ այդ խոշոր պետութիւնների երկրներում տեղի ունեցող պատմական անցքերի եւ իրադարձութիւնների արձագանգը :

Յաթա (Յատաի) : Hatti անունը, դրում է Հրոզնին, Սումմեր-Ակկադեան ծագում ունեցող աշխարհագրական մի անուն է : Իսկ Կոնստնդի կարծիքով Հաթ (Յաթ) Hat բառը, որից եւ առաջանում է երկրի անունը (pays de Hattes), այսինքն՝ Հատտերի երկիր, նշանակում է «արծաթ» : Ակկադացիները (ինչպէս եւ Եգիպտացիները) Տաւրոս լեռան միւս կողմերում դառնուող երկրները յորջորջում էին «արծաթի լեռների երկիր» (pays des montagnes de l'argent) :

Ահա այս ժամանակաշրջանի Հայկական բարձրաւանդակի պատմութեան մասին պատմագէտներից ոմանք ցանկացել են որոշ տեղեկութիւններ հայթայթել : Հիմնուելով Բաղդէական ամենահին արձանագրութիւններից մէկում յիշատակուած Գուտիում (կամ՝ Կուտիում) երկրի անուն վրայ, այն կարծիքն են յայտնել, թէ այդ Գուտիումը դառնուելիս է եղել Վանայ եւ Ուրմիայի լճերի մէջտեղ եւ որ հետագայում Հայաստան անունն է ստացել³ :

Պատմաբան Ալոնցը նոյնպէս դիմելով պատմութեան անդրադոյն ժամանակաշրջաններին, փորձ է անում Հայաստանի նախապատմութեան սկիզբը կապել Սումմեր-Ակկադեան քաղաքակրթութեան ժամանակաշրջանի հետ, չը-

³ Սա մի շփոթ վարկած է : Որովհետեւ նշմարտութիւնը այն է, որ Գուտացիները Ասորեստանի հիւսիսային լեռներում կամ Ելամից դէպի հիւսիս ապրող լեռնցի ռազմատենչ ցեղեր են եղել : Բաբելոնեան արձանագրութիւններում յիշատակուած է, որ Բաբելոնի Ակկադեան պետութիւնը նրանք են կործանել մօտ 2570 թուականներին (մ. թ. ա.) : Այդ լեռնցիները աւերիչ արշաւներով անցնում են Բաբելոնի վրայից (Սումմերական մի արձանագրութիւն Գուտացիներին «Լեռան վիշապ» անունն է տուել) եւ այնպէս են կործանում Ակկադը, որ այլեւս չի կարողանում նրանից յետոյ ուտի կանգնել : Գուտացիները աւերում են նաեւ Սումմերը («Հին Արեւելքի Պատմութիւն», Երեւան, 1938) : Ահա այդ Գուտացիները եւս համարում են Հիթիթական ցեղերի մի միւլ (Լէօ) :

Իսկ եթէ նկատի առնենք նաեւ, որ Համմուրաբիի քաղաքութիւնը վերջնականապէս կործանողները եղան Հաքերը (Խեքերը), ապա Գուտացիների արշաւանքները կը դառնան կապակցական ընդհանուր շարժման տրամաբանական փաստը :

նայած սակայն իր այն համոզման, որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի անունն ու բախտը կատարեալ խաւարի մէջ էին գտնուում (N. Adontz, "Histoire d'Armenie") :

Սարկոն-Ակկադիի ժամանակ Փոքր Ասիայում գտնուող Փուրուշխան-դա (Հաթերի քաղաք, ենթադրուում է ժամանակակից Կեսարիան) կամ՝ Փուր-սհանդա, Բարչուխանդա քաղաքում ապրող Սեմական դադութից վաճառականներին մի խումբ դիմում է Սարկոն-Ակկադիին (2633-2579) ու բողոքում քաղաքի իշխան Նուր-Դատիի կամ Նուր-Դակոնի դէմ եւ խնդրում Սարկոնի միջամբտութիւնը : Սարկոնը սկզբում տատանւում է ճանապարհի հեռաւորութեան պատճառով : Սակայն վաճառականների պատգամաւորութիւնը կարողանում է համոզել արքային՝ նրան հրապուրելով երկրի ոսկու, թանկագին քարերի ու մրգենիների ճոխ հարստութեամբ եւ համաձայնեցնում օգնութեան դալու : Սարկոն խորհրդակցելով իր զօրականների հետ, վերջապէս որոշում է արշաւել Նուր-Դակոնի վրայ : Սարկոն յաղթում է նրան, գրաւում է քաղաքը, կողոպտում եւ վերադարձին այդ քաղաքից իր հետ տանում է մի շարք մրգատու ծառեր, որոնք գոյութիւն չունէին իր երկրում : Այդ մրգատու ծառերն են եղել՝ խնձորենի (hashuru, haskhuru), թզենի, թութ (titu), սալորենի (salluru, sallura), ցրդենի (sirdu, serdu=Ֆր. sabine), վարդենի (simissala), որթատունկ (karanu), բեւեկնի (bittu) եւ այլն : Յայտնի է, որ այս մրգեղէնների եւ մրգաբոյսերի անունները մեծ մասամբ պահպանուել են հայերէնի մէջ աննշան ձայնափոխութեամբ :

Այս լեզուական փաստերից ոմանք բխեցնում են այն ենթադրութիւնը, թէ Փուրուշխանդան կարող էր Հայերից բնակեցուած մի երկիր լինել եւ կամ Հայաստանի բաղձաթիւ ցեղերի եւ իշխանների մայրաքաղաքներից մէկը⁴ :

Իսկ Ադոնցը այս առիթով գրում է. «Այս փաստը ունի ծայրայեղ կարեւորութիւն, որ բառական նոյն բնոյթի ուրիշ տարրերի հետ պիտի լինի մի տեսակ ջահ՝ լոյս սփռելու համար Հայաստանի նախահայկական ժողովրդի ցեղական նկարագրի վրայ»⁵ :

Մեր պատմութեան համար այս փաստերի շահեկան նշանակութիւնը կայանում է նրանում, թէ Հայերի մէջ այդ մրգատու ծառերի անունները ի՞նչ ճանապարհով են մտել : Կարելի է անել երկու հնարաւոր ենթադրութիւն :

ա) Լեզուաբանական ստուգաբանութիւնը ցոյց է տալիս, որ այդ մրգանունները ինչպէս հայերէնի, այնպէս էլ ուրիշ հին լեզուների մէջ մտել են իբրեւ փոխառութիւններ Ասորեստանեան լեզուից (տես՝ Պրոֆ. Հր. Աճառեանի «Արմատական Բառարան»): Ասորեստանցիներն էլ իրենց հերթին դրանք վերցրել են Բաբելոնական (Քաղդէական) լեզուից, որ Սարկոն-Ակկադիին իր հետ բերել էր Փոքր Ասիայի Փուրուշխանդա քաղաքից, որով դրանք ծագումով Հաթերի (Քաթերի) լեզուից բառեր են :

բ) Իսկ եթէ այդ մրգատեսակների անունները Ասորեստանցիների լեզուի ճանապարհով չեն մտել հայերէնի մէջ, այլ ուղղակի աղբիւրից, ապա՝ այս դէպքում, մեզ մնում է միակ հնարաւոր ենթադրութիւնը ընդունել այն, թէ Նուր-Դակոնի ենթակայ ժողովուրդների ցեղակիցներից կամ հիւդերից բաղկա-

⁴ Մուշեղ Սեքսքեան, «Մեր պայքարը Հայ ազատագրական ուղիով», Գահիրէ, 1948 :

⁵ N. Adontz, "Histoire d'Armenie", էջ 395-400 :

ցած պէտք է լինէին Հայկական բարձրաւանդակի բնակիչները կամ բնակչութեան մէջ դերիչսող տարրերը:

Այս սխալը առաջնակարգ կարեւոր նշանակութիւն ունի պարզապէս ներու համար նախապատմական Հայաստանի բնակչութեան տեսութիւնը, որով սկզբից եւեթ խիստ բախտորոշ առնչութիւններով կապուած է եղել Սեթեւորի եւ Սեթական աշխարհի հետ, դուցէ եւ հենց Հայկական բարձրաւանդակը այս ժամանակաշրջանում, Սեթերի կամ նրանց ցեղակից ժողովուրդների հայրենիքն է ներկայացրել: Այլապէս ինչո՞վ բացատրել, որ Սեթական (Հեթական, հետագայում՝ Հիթիթական) մարդաբանական տիպը վերածուած է Հայկական աղային տիպին եւ Սեթական մարդաբանական կազմի իւրայատկութիւնները արտայայտուած են Հայկականի մէջ եւ կոչուած Արմենիդ:

Միւս կողմից, պատահական չէ, որ այս ժամանակաշրջանի Հայկական բարձրաւանդակի տարացեղ բնակիչներին ու բազմացեղ ժողովուրդներին մէկ ընդհանուր անունով յորջորջելու համար գիտնականները կանդ են առնում «Սեթ» կամ «Հաթ» անունի վրայ: «Հետազոտողներից ոմանք՝ գրում է Լէօն, այդ բոլոր ազգերի համար ստեղծեցին մի ընդհանուր անուն, այն է՝ Սպիտակ Ալլաոռնիկներ (Blanc Allophy): «...նրանց մի ընդհանուր անուն տալու համար մի քանի առաջարկութիւններ եղան: Յը. Լընորմանի առաջարկութեամբ՝ մի ժամանակ դործ էր անում Ալարոդեան ցեղ անունը, քանի որ Արարատի բնակիչներում ապրող ժողովուրդը (Ուրարտացի) յայտնի էր Հերոդոտոսին «Ալարոդ» անունով: Յետոյ աւելի լաւ համարուեց վերցնել այդ ընդհանուր ընտանիքին պատկանող մի. Նշանաւոր ազգի անունը եւ տարածել ընտանիքի միւս բոլոր անդամների վրայ (ընդդժմումը մերն է - Գ. Հ.): Ահա այդ ազգն է, որ Ասորեստանի արձանագրութիւններում կոչուած էր «Սաթթա» կամ «Սաթ», իսկ Եդիպոտոսի արձանագրութիւններում «Սեթա» կամ «Սեթ» (Սեյա), որոնք այժմ դարձել են «Հաթ», «Հեթիթ» (Աստուածաշնչի թարգմանութեան մէջ՝ «Քեթագիթ»):⁶

Բայց մենք աւելի յետոյ պիտի տեսնենք, որ հնագոյն ժամանակներում, Մերձուր Արեւելքի ընդարձակ տարածութիւնների վրայ (ըստ Խոնեստ Հերցֆելդի նորագոյն պեղումների՝ Ալիս գետի ափերից ու Կոզքիսից՝ Հայաստանի ու Միջագետքի ճանապարհով ամբողջ Պարսկաստանն ու Աֆղանստան, մինչեւ Ինդոս գետի հովիտը) ապրող զանազան ցեղերը⁷, որոնք ունեցել են մէկ ընդհանուր ծագում (Լէօ) եւ որոնք պատմագէտների կողմից կոչուել են զանազան անուններով, Հուրրիներ, Սումերներ եւ Ելամացիներ, պարզապէս եղել են «Հաթեան» ցեղեր կամ ցեղակիցներ, որ ոտք են դրել նրանք պատմութեան ընթացքում⁸:

Բայց հետագայում գիտական մտքի անխոնջ հետազոտութիւնների շնորհիւ այդ անունները իրրեւ տարրեր ցեղեր զատորոշուել ու առանձնացուել են իրարից:

⁶ Լէօ, «Հայ ժողովրդի պատմութիւն», Հ. 1, էջ 177:

⁷ Տես Արշակ Սափրաստեան, «Հայ ցեղին ծագման խնդիրը», Բազմավէպ, 1931, էջ 111:

⁸ Ա. Ալալոյանեան, «Կեսարիա», Ա. մաս, Եգիպտոս, 1936:

Անսպասելի, նախապատմական Հայաստանի հնագոյն ցեղերի պատմութիւնը անջատ ու մեկուսի պատմութիւնն է, որպէս մի առանձին երկրի ու նրա բնակիչների մասին: Այլ նա սերտ կապի ու յարաբերութեան մէջ է Մերձաւոր Արեւելքի եւ Առաջաւոր Ասիայի տարբեր ժողովուրդների պատմութեան հետ: Ժողովուրդներ, որոնց հետ նա ապրել է երկար դարեր խիստ սահմանամերձ շփումներով կամ միջնորդուած յարաբերութիւններով:

Պրոֆ. Սաչատրեանի տեսութեամբ, Մերձաւոր Արեւելքի պատմութիւնն սկսում է Սուրարիների առանձին պատմական ժամանակաշրջանով, որին յաջորդում է Սարրի-Միտանիների ժամանակաշրջանը: Ուրիշ պատմագէտներ սակայն, Հաթեան արձանագրութիւնների հիման վրայ ցանկանում են այս երկու ժամանակաշրջանների միջեւ դնել Հուրրիներին (կամ Հարրիներին):

Սումերական եւ Ասորեստանեան հին արձանագրութիւնները, ինչպէս եւ հետագայում Եգիպտական եւ Հիթիթական արձանագրութիւնները, որոնք երեւան հանուեցին Տել-Ամառնայի ու Բողազքէօյի պեղումներից, մեզ տեղեկութիւններ են հաղորդում նախասիրական հնագոյն ժողովուրդների մասին, որոնց մէջ յիշատակում են մի ժողովրդի, որ երրորդ հազարամեակի սկիզբներին եւ կամ մի քիչ աւելի յետոյ, արչաւում ու զբաւում է Միջագետքը եւ նրա հիւսիսային կողմերում՝ Վերին Միջագետքում հաստատում իր իշխանութիւնը: Եւ ապա սկսում է այնտեղից տարածուել դէպի Մերձաւոր Արեւելք ու զբաւում Փոքր Ասիայի բոլոր երկրները եւ նրանց թւում նաեւ Հայաստանը: Այս ժողովուրդը, ահա, Սումեր-Ասորեստանեան արձանագրութիւններում կոչուել է Սուրարիներ (կամ՝ Սուրարու, Սուրարտու), իսկ Սեթական արձանագրութիւններում՝ Սուրրիներ (Հուրրիներ) կամ Սարրիներ:

ԳԷՈՐԳ ՀԱՏԻՏԵԱՆ

(Շար. 2)

